

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2020թ. հունիսի 30-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության «Տնտեսական և սոցիալական զարգացում» դրամաշնորհի տրամադրման համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**



## Ճապոնիայի հայտագիր

30 հունիսի, 2020թ

Երևան

Ձերդ Գերագանցություն,

Պատիվ ունեմ հղում կատարել վերջերս Ճապոնիայի կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ «Ստացող») ներկայացուցիչների միջև անցկացված վերջին քննարկումներին, որոնք վերաբերում են Ճապոնիայի հետ ընդլայնվող տնտեսական համագործակցությանը՝ նպատակ ունենալով խթանել Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացմանը և Ճապոնիայի կառավարության անունից առաջարկել հետևյալ համաձայնագիրը՝

1. Ստացողի կողմից Տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») իրականացմանը նպաստելու համար՝ Ճապոնիայի օրենքներին և կանոնակարգերին և բյուջետային հատկացումներին համապատասխան, Ճապոնիայի Կառավարությունը Ստացողին է տրամադրում չորս հարյուր միլիոն ճապոնական իենի (¥400 000 000) դրամաշնորհ (այսուհետ՝ Դրամաշնորհ):

2. (1) Դրամաշնորհը և դրա հաշվարկված տոկոսադրույքը Ստացողը պետք է պատշաճ կերպով և բացառապես օգտագործի Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքների և (կամ) ծառայությունների ձեռք բերման համար, որոնք թվարկված են այն ցանկում, որը պետք է փոխադարձաբար համաձայնեցվի երկու Կառավարությունների պետական մարմինների միջև (այսուհետ՝ համապատասխանաբար՝ «Ապրանքներ» «Ծառայություններ»), ինչպես նաև Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այդպիսի վճարների կատարման համար, պայմանով, որ Ապրանքներն արտադրվում են թույլատրելի աղբյուր համարվող երկրներում, իսկ Ծառայությունները մատուցվում են իրավասու աղբյուրի երկրների քաղաքացիների կողմից:

(2) Վերը նշված (1) ենթակետում նշված ցանկը ենթակա է փոփոխությունների, որոնք կարող են համաձայնեցվել երկու Կառավարությունների շահագրգիռ պետական մարմինների միջև:

(3) Վերը նշված (1) ենթակետում նշված իրավասու աղբյուրների երկրների շրջանակը համաձայնեցվելու է երկու Կառավարությունների շահագրգիռ պետական մարմինների միջև:

3. (1) Ստացողը բացում է իեն արժույթով սովորական դեպոզիտային հաշիվ

Ճապոնիայում գտնվող բանկում՝ Ստացոդի անունով (այսուհետ՝ «Հաշիվ»)՝ սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո տասնչորս օրվա ընթացքում և գրավոր տեղեկացնում է Ճապոնիայի կառավարությանը՝ Հաշվի բացման ընթացակարգի ավարտման մասին հաշվի բացման օրվանից յոթ օրվա ընթացքում:

(2) Հաշվի միակ նպատակն է 4-րդ պարբերությունում նշված՝ Ճապոնիայի կառավարությունից ճապոնական իենով վճարման ստացումը, ինչպես նաև Ապրանքների և/կամ Ծառայությունների ձեռքբերման համար անհրաժեշտ վճարումների և երկու Կառավարությունների պետական մարմինների միջև համաձայնեցված նման այլ վճարումների կատարումը:

4. Ճապոնիայի կառավարությունը կտրամադրի Դրամաշնորհը 1-ին ենթապարբերությունում նշված գրավոր ծանուցումը ստանալու օրվանից մինչև 2021թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում պարբերություն 1-ում նշված գումարից Հաշվին ճապոնական իենով վճարում կատարելու միջոցով: Ժամանակահատվածը կարող է երկարաձգվել երկու Կառավարությունների պետական մարմինների միջև փոխադարձ համաձայնությամբ:

5. (1) Ստացողը կձեռնարկի անհրաժեշտ հետևյալ միջոցառումները՝  
(ա) ապահովել, որ Դրամաշնորհը և դրա հաշվարկված տոկոսը բացառապես հատկացվում են Հաշվից՝ Դրամաշնորհի տրամադրումից հետո 12 ամիս ժամանակահատվածում, եթե ժամանակահատվածը չի երկարաձգվել երկու Կառավարությունների պետական մարմինների միջև փոխադարձ համաձայնությամբ, Ապրանքների և/կամ Ծառայությունների ձեռքբերմանը և 2-րդ պարբերության 1-ին ենթապարբերությամբ նշված վճարների վճարմանը և Ծրագրի ավարտից հետո Ճապոնիայի Կառավարությանը մնացյալ գումարը վերադարձնելուն պատրաստ լինելու համար:

(բ) ապահովել, որ մաքսատուրքերը, ներքին հարկերը և այլ հարկային վճարները, որոնք կարող են գանձվել Ստացողի երկրում Ապրանքների և (կամ) Ծառայությունների գնման հետ կապված, [ազատվում են/կրում է նշանակված մարմնի կողմից՝ առանց օգտագործելու Դրամաշնորհն ու դրա հաշվարկված տոկոսներները],

(գ) շրջակա միջավայրի և սոցիալական պատշաճ ուշադրություն դարձնել Դրամաշնորհի օգտագործման և դրա նշանակված տոկոսների օգտագործման հարցում:

(դ) առանց հապաղելու, կամ Ճապոնիայի Կառավարության պահանջով

ներկայացնել Ճապոնիայի կառավարության համար ընդունելի գրավոր հաշվետվություն՝ Հաշվի վրա կատարված գործարքների վերաբերյալ, պայմանագրերի, վաուչերների և համապատասխան գործարքների վերաբերյալ այլ փաստաթղթերի պատճենների հետ միասին, երբ Դրամաշնորհն ու դրա հաշվարկված տոկոսները ամբողջությամբ օգտագործվում են Ապրանքների և (կամ) Ծառայությունների ձեռքբերման և 2-րդ կետի (1) ենթակետում նշված վճարների կատարման համար,

(ե) ապահովել, որ Ապրանքները և (կամ) Ծառայությունները պահպանվում և օգտագործվում են պատշաճ և արդյունավետ կերպով՝ Ծրագրի իրականացման համար, և դրանք չեն օգտագործվում ռազմական նպատակներով;

(զ) ապահովել, որ Ապրանքներն ու (կամ) Ծառայությունները, սկզբունքորեն, օգտագործվում են վերջնական օգտագործողների կողմից, ներառյալ Ստացողը, ոչ առևտրային նպատակներով;

(է) ապահովել ապրանքների՝ Ստացողի երկրում արագ բեռնափոխումը, մաքսազերծումը և ներքին փոխադրումը;

(ը) ապահովել Ստացողի երկրում ծրագրի իրականացմամբ զբաղվող անձանց անվտանգությունը;

(թ) Ճապոնիայի ֆիզիկական անձանց և/կամ երրորդ երկրների ֆիզիկական անձանց, որոնց ծառայություններ կարող են պահանջվել Ապրանքների և (կամ) ծառայությունների մատակարարման հետ կապված, տրամադրել այնպիսի հարմարություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Ստացողի երկիր մուտք գործելու կամ իրենց աշխատանքը կատարելիս այնտեղ մնալու համար;

(ժ) կրել Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը, բացառությամբ՝ դրամաշնորհով և դրա հաշվարկված տոկոսով ներառված ծախսերը; և

(ի) Ծրագրի ավարտից հետո Ճապոնիայի կառավարությանը տրամադրել վերջնական հաշվետվություն:

(2) Ճապոնիայի կառավարության պահանջով, Ստացողը վերջինիս է տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն Դրամաշնորհի և հաշվարկված տոկոսների վերաբերյալ:

(3) Ինչ վերաբերում է Ապրանքների բեռնափոխադրման և ծովային ապահովագրությանը, Ստացողը պետք է ձեռնպահ մնա այնպիսի սահմանափակումներ կիրառելուց, որոնք կարող են խոչընդոտել արդար և ազատ մրցակցությանը

բեռնափոխադրման և ծովային ապահովագրական ընկերությունների միջև:

(4) Ապրանքները և/կամ Ծառայությունները չեն արտահանվում կամ վերարտահանվում Ստացողի երկրից:

6. Սույն փոխըմբռնման իրականացման համար հետագա ընթացակարգային հարցերը համաձայնեցվելու են երկու Կառավարությունների շահագրգիռ պետական մարմինների միջև խորհրդակցության միջոցով:

7. Երկու Կառավարություններ խորհրդակցում են միմյանց հետ ցանկացած հարցի վերաբերյալ, որը կարող է բխել սույն համաձայնագրից կամ կապված է դրա հետ:

Պատիվ ունեմ առաջարկելու, որ սույն հայտագիրը և ի պատասխան [Ձերդ գերազանցության] հայտագիրը, որը Ստացողի անունից հաստատում է, որ վերոհիշյալ համաձայնագիրը հանդիսանում է երկու Կառավարությունների միջև համաձայնություն, որն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ այդպիսի համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին գրավոր ծանուցումը Ճապոնիայի Կառավարության կողմից ստանալու ամսաթվին:

Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ խնդրում եմ [Ձերդ գերազանցություն] ընդունեք հարգանքներիս հավաստիքը:

## Հայաստանի հայտագիր

Երևան, (ամիս) (ամսաթիվ), 2020թ

Ձերդ Գերագանցություն,

Պատիվ ունեմ ընդունելու այսօրվա ամսաթվով [Ձեր/Ձերդ գերագանցության] հայտագիրը՝ հետևյալ բովանդակությամբ:

«(Ճապոնիայի հայտագիր)»

Պատիվ ունեմ Հայաստանի Հանրապետության կառավարության անունից հաստատելու սույն Համաձայնագիրը, և համաձայնելու, որ [Ձերդ գերագանցության] հայտագիրը և սույն հայտագիրն ի պատասխան, հանդիսանում են երկու Կառավարությունների միջև համաձայնություն, որն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ այդպիսի համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին գրավոր ծանուցումը Ճապոնիայի Կառավարության կողմից ստանալու ամսաթվին:

Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ խնդրում եմ [Ձերդ գերագանցություն] ընդունեք հարգանքներիս հավաստիքը:

(※Արձանագրություն) առանձին ի պահ են հանձնվում ճապոնական և հայկական կողմին՝  
որի մի մասը (առաջին պարբերության սյունը և յուրաքանչյուր կողմի ստորագրողը)  
կփոխարինվեն:

Ընթացակարգային հարցերի վերաբերյալ արձանագրություն

[ (Ճապոնական կողմ)

Հղում կատարելով 「 E/N(ամիս) (ամսաթիվ), 2020 」 -ով թվագրված Ճապոնիայի կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Ստացող) միջև Հայտագրերի փոխանակմանը, որը վերաբերում է Ճապոնիայի հետ ընդլայնվող տնտեսական համագործակցությանը՝ նպատակ ունենալով խթանել Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացմանը (այսուհետ՝ Հայտագրերի փոխանակում), Ճապոնիայի կառավարության և Ստացողի ներկայացուցիչները ցանկանում են արձանագրել հետևյալ ընթացակարգային հարցերը, ինչպես համաձայնեցված է երկու Կառավարությունների շահագրգիռ պետական մարմինների միջև:

(հայկական կողմ)

Հղում կատարելով 「 E/N(ամիս) (ամսաթիվ), 2020 」 -ով թվագրված Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Ստացող) և Ճապոնիայի կառավարության միջև Հայտագրերի փոխանակմանը, որը վերաբերում է Ճապոնիայի հետ ընդլայնվող տնտեսական համագործակցությանը՝ նպատակ ունենալով խթանել Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացմանը (այսուհետ՝ Հայտագրերի փոխանակում), Ստացողի և Ճապոնիայի կառավարության ներկայացուցիչները ցանկանում են արձանագրել հետևյալ ընթացակարգային հարցերը, ինչպես համաձայնեցված է երկու Կառավարությունների շահագրգիռ պետական մարմինների միջև:]

1. Թույլատրելի ապրանքների և/կամ ծառայությունների ցանկը և Թույլատրելի աղբյուր համարվող երկրներ

Հայտագրերի փոխանակման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքները և (կամ) ծառայությունները (այսուհետ՝ «Ապրանքներ» և «Ծառայություններ») և Հայտագրերի փոխանակման 2-րդ կետի (3) ենթակետում նշված Թույլատրելի աղբյուր համարվող երկրները թվարկվում են Հավելված 1-ում:

2. Գնումներ

(1) Հայտագրերի փոխանակման 1-ին կետում նշված դրամաշնորհը (այսուհետ՝ Դրամաշնորհ) և դրա հաշվարկված տոկոսները կօգտագործվեն Ապրանքների և (կամ) ծառայությունների ձեռքբերման համար, ինչպես նաև այդպիսի վճարների համար, որոնք անհրաժեշտ են Ծրագրի իրականացման համար:

(2) Նման պահանջների համապատասխանությունն ապահովելու համար պահանջվում է, որ Ապրանքների և (կամ) ծառայություններ ձեռքբերման համար Ստացողն աշխատանքի ընդունի անկախ և իրավասու գործակալ:

Ստացողը, հետևաբար, կնքում է աշխատանքային պայմանագիր՝ Հայտագրերի փոխանակման ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում՝ «գնման գործակալության անվանումը» հետ (այսուհետ՝ Գործակալ)՝ հանդես գալու Ստացողի անունից Գործակալի ծառայությունների մատուցման շրջանակի համաձայն, ինչպես նշված է Հավելված 2-ում:

(3) Նշված աշխատանքային պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ճապոնիայի կառավարության կողմից գրավոր ձևով հաստատվելուց հետո

(4) Ապրանքների և (կամ) ծառայությունների գնման պայմանագրերը կնքվում են Ճապոնական իենով Գործակալի և Ճապոնիայի քաղաքացիների միջև, եթե այլ բան համաձայնեցված չէ երկու Կառավարությունների շահագրգիռ պետական մարմինների միջև: («Ճապոնացի քաղաքացիներ» տերմինը սույն Ընթացակարգային հարցերի վերաբերյալ արձանագրության մեջ նշանակում է Ճապոնացի ֆիզիկական անձ կամ Ճապոնական իրավաբանական անձանց, որոնց վերահսկում են Ճապոնացի ֆիզիկական անձինք և գրանցված են Ճապոնիայում):

(5) Ապրանքները և/կամ Ծառայությունները ձեռք են բերվում Ճապոնիայի կառավարության կողմից սահմանված գնումների ուղեցույցներին համապատասխան, որոնք սահմանում են, ի թիվս այլի, մրցույթի անցկացման ընթացակարգերը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի ընթացակարգերը անթույլատրելի են կամ անհամապատասխան:

(6) Ստացողն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում դրամաշնորհի դրա հաշվարկված տոկոսի օգտագործումն արագացնելու համար, ներառյալ՝ ներմուծման առկա ընթացակարգերի դյուրացումը, ներառյալ՝ ներմուծման գործող ընթացակարգերի հեշտացումը:

(7) Ստացողը երաշխավորում է, որ Ստացողի ցանկացած պաշտոնատար անձ չի ստանձնում Ճապոնիայի քաղաքացիների և (կամ) երրորդ երկրների քաղաքացիների Ապրանքներ և/կամ Ծառայություններ գնելու աշխատանքներ կատարումը (սույն Ընթացակարգային հարցերի վերաբերյալ արձանագրության մեջ «երրորդ երկրների



քաղաքացիներ» տերմինը նշանակում է երրորդ երկրների ֆիզիկական կամ իրավաբանական անձ):

### 3. Հանձնաժողով

(1) Հայտագրերի փոխանակման ուժի մեջ մտնելուց հետո Կառավարությունները նշանակում են իրենց ներկայացուցիչներին, ովքեր լինելու են խորհրդատվական հանձնաժողովի անդամներ (այսուհետ՝ Հանձնաժողով), որոնց դերը պետք է լինի այն հարցերի քննարկումը, որոնք կարող են ծագել կամ կապված լինել նոտաների փոխանակման հետ: Գործակալը նշանակում է իր ներկայացուցչին, որը կմասնակցի Հանձնաժողովի նիստերին որպես խորհրդատու:

(2) Հանձնաժողովը նախագահում է Ստացողի ներկայացուցիչը: Գործակալից բացի այլ կազմակերպությունների ներկայացուցիչները, անհրաժեշտության դեպքում, կարող են հրավիրվել մասնակցելու Հանձնաժողովի նիստերին՝ խորհրդատվական ծառայություններ մատուցելու համար:

(3) Հանձնաժողովի տեխնիկական առաջադրանքը սահմանվում է Հավելված 5-ում:

(4) Երկու Կառավարությունների միջև Հանձնաժողովի առաջին նիստը տեղի կունենա հնարավորինս շուտ՝ Հայտագրերի փոխանակումն ուժի մեջ մտնելուց հետո: Հետագա հանդիպումները կանցկացվեն կամ Ճապոնիայի կառավարության կամ Ստացողի պահանջով: Գործակալը կարող է խորհուրդ տալ երկու Կառավարություններին՝ Հանձնաժողովի նիստ հրավիրելու անհրաժեշտության մասին:

### 4. Հատկացման ընթացակարգը

Դրամաշնորհի և դրա հաշվարկված տոկոսի ներքո Ապրանքների և/կամ ծառայությունների գնմանը և գործակալի վճարներին առնչվող հատկացման կարգը հետևյալն է.

(1) Ստացողը (կամ իր կողմից նշանակված մարմինը) և Հայտագրերի փոխանակման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված Ճապոնիայում բանկը (այսուհետ՝ Բանկ) կնքում են միջոցների փոխանցման վերաբերյալ համաձայնություն, որում Ստացողը գործակալին նշանակում է որպես ներկայացուցիչ, ով հանդես է գալիս Ստացողի անունից գործակալին միջոցները փոխանցելու առնչությամբ:

(2) Գործակալը դիմում է Բանկին՝ Ապրանքներ և/ Ծառայություններ և Հավելված 2-ում նշված Գործակալին առնչվող ծառայություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ ծախսերը հոգալու նպատակով միջոցներ փոխանցելու համար: Յուրաքանչյուր հայտի կցվում է փոխանցված միջոցներով նախատեսված մանրամասն ծախսերի նախահաշիվ և Ճապոնիայի

Կառավարության կողմից վերը նշված 2-րդ կետի (3) ենթակետում նշված պայմանագրի վերաբերյալ հաստատման պատճենը: Հայտի և նախահաշվի պատճենը միաժամանակ ուղարկվում են ստացողին:

(3) Վերոնշյալ (2) ենթակետում նշված Գործակալի դիմումի դեպքում, Բանկը պետք է Ստացողին ծանուցի Գործակալի դիմումի վերաբերյալ: Բանկը պետք է Գործակալին գումարը վճարի Հայտագրերի փոխանակման 3-րդ կետի (1) ենթակետում նշված Հաշվից (այսուհետ՝ Հաշիվ), եթե Ստացողի կողմից որևէ առարկություն չի ներկայացվում Բանկի ծանուցումը ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Գործակալը պետք է ապրանքներ և/կամ ծառայություններ մատակարարողներին վճարի ստացված միջոցներից (այսուհետ՝ Կանխավճարներ)՝ վերջիններիս հետ կնքված պայմանագրերի դրույթներին համապատասխան:

Նման վճարումներից հետո Գործակալը, առկայության դեպքում, կարող է օգտագործել Կանխավճարների մնացորդային գումարը այլ թույլատրելի ապրանքների և/կամ ծառայությունների գնման համար՝ առանց նշյալ գումարը Հաշվին ետ փոխանցելու:

(4) Երբ Գործակալի հաշվին առկա ընդհանուր մնացորդային գումարը (այսուհետ՝ Մնացորդային գումար) պակաս է Դրամաշնորհի երեք տոկոսից (3%) և վերջինիս հաշվարկված տոկոսադրույքից, Ստացողը կարող է դիմել Գործակալին, որպեսզի վերջինս փոխհատուցի Մնացորդային գումարը Ստացողին այն վճարումների համար, որոնք արդեն իսկ կատարվել են Ստացողի կողմից Ապրանքների և/կամ Ծառայությունների գնման համար և չեն կատարվել Դրամաշնորհի և վերջինիս հաշվարկված տոկոսադրույքի միջոցներից, պայմանով, որ այդ վճարումները կատարվել են Հայտագրերի փոխանակման ուժի մեջ մտնելու օրը կամ դրանից հետո:

Երբ Գործակալի կողմից Ստացողի դիմումը համարվում է պատշաճ և երբ Հավելված 4-ում սահմանված ձևաչափին համապատասխան թե՛ Ստացողի, և թե՛ Գործակալի կողմից Մնացորդային գումարի համար Թույլատրելի գնումների հաստատված վկայականը տրամադրված է, Գործակալը պետք է փոխհատուցի Մնացորդային գումարը Ստացողին:

(5) Ինչ վերաբերում է Հայտագրերի փոխանակման 5-րդ կետի (1)(ա) ենթակետին, նշյալ ենթակետում նշված ժամանակահատվածի ավարտից հետո այլևս հնարավոր չէ նոր մասհանումների կատարումը, եթե այլ բան համաձայնեցված չէ երկու կառավարությունների շահագրգիռ պետական մարմինների միջև:

5. Մնացորդային գումարի ետ վերադարձ

Ինչ վերաբերում է Հայտագրերի փոխանակման 5-րդ կետի (1)(ա) ենթակետին, ապա երբ

Ճապոնիայի կառավարությունը, վերջնական հաշվետվությունը ստանալուց հետո, գտնում է, որ Դրամաշնորհի օգտագործումը և վերջինիս հաշվարկված տոկոսադրույքը ամբողջական չեն, ապա ծանուցում է Ստացողին՝ մնացորդային գումարի՝ Հաշվին ետ վերադարձի ընթացակարգերի և Մնացորդային գումարի վերաբերյալ: Ստացողը պետք է անհապաղ փոխհատուցի նշյալ գումարը Ճապոնիայի կառավարությանը՝ վերոնշյալ ընթացակարգերի միջոցով:

Երևան, (Մմիս) (ամսաթիվ), 2020

(A/MՃապոնական կողմի համար)

Ճապոնական կողմի

Ստորագրողի անունը և պաշտոնը

Հայկական կողմի

Ստորագրողի անունը և պաշտոնը

A/Mհայկական կողմի համար)

Հայկական կողմի

Ստորագրողի անունը և պաշտոնը

Ճապոնական կողմի

Ստորագրողի անունը և պաշտոնը

**Հավելված 1**

Թույլատրելի ապրանքների և/կամ ծառայությունների և թույլատրելի աղբյուր համարվող երկրների ցանկ

1. Թույլատրելի ապրանքների և/կամ ծառայությունների ցանկ

(1) Թույլատրելի ապրանքներ

- Բժշկական սարքավորումներ
- Առնչվող սարքավորումներ և (կամ) նյութեր բժշկական սարքավորումների շահագործման և սպասարկման համար
- ՀՀ բժշկական կենտրոնին (կենտրոններին) անհրաժեշտ սարքավորումներ և (կամ) նյութեր

(2) Թույլատրելի ծառայություններ

- Վերոնշյալ 1.1-ում նշված ապրանքների ձեռքբերման և տեղափոխման համար անհրաժեշտ ծառայություններ
- Վերապատրաստման ծառայություններ և բժշկական սարքավորումների շահագործման և պահպանման համար այլ անհրաժեշտ ծառայություններ
- Խորհրդատվական ծառայություններ

2. Թույլատրելի աղբյուր համարվող երկրների ցանկ

- Թույլատրելի աղբյուր համարվող երկրներ են բոլոր երկրները և տարածքները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության:

Հավելված 2

Գործակալի ծառայությունների շրջանակը

1. Տեղեկատվության և խորհուրդների տրամադրում Հանձնաժողովի նիստերին

2. Երաշխավորում, որ Ստացողը և վերջնական օգտագործողները լիովին հասկանում են անհրաժեշտության դեպքում օգտագործելու ընթացակարգերը
3. (1) Ստացողի համար ապրանքների և (կամ) ծառայությունների բնութագրերի պատրաստում, ներառյալ՝ անհրաժեշտության դեպքում վերջնական օգտագործողների հետ մանրամասն քննարկումների անցկացում  
(2) Ձեռք բերվող ապրանքների և (կամ) ծառայությունների արժեքին և տեսակին համապատասխան գնման փաստաթղթերի պատրաստում  
(3) Երկու երկրների կառավարությունների միջև համաձայնեցված ձեռք բերման վերաբերյալ գովազդ, անհրաժեշտության դեպքում, ինչպես և որտեղ է տեղի ունենալու ձեռքբերումը  
(4) Առաջարկների գնահատում՝ հաշվի առնելով տեխնիկական և ֆինանսական նկատառումները  
(5) Ստացողին առաջարկությունների ներկայացում՝ մատակարարների հետ կարգուկանոն հաստատելու համար
4. Ստացողի հետ, ենթապարբերությունում նշված, աշխատանքային պայմանագրի հիման վրա կանխավճարների ստացում և օգտագործում  
(2) Համաձայնեցված արձանագրության պարբերություն 2 ընթացակարգային հարցերի վերաբերյալ
5. Մատակարարների հետ պայմանագրերի բանակցում և կնքում, ներառյալ՝ բավարար վճարման, առաքման և ստուգման պայմանավորվածությունները
6. Մատակարարումների առաջընթացի ստուգում՝ առաքման ամսաթվերի պահպանումն ապահովելու համար
7. Ստացողներին և վերջնական օգտագործողներին պատվերների առաջընթացի մասին մանրամասն տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի տրամադրում, առաքված ապրանքների ծանուցում, պայմանագրերում փոփոխություններ, առաքման տեղեկատվություն, առաքման փաստաթղթեր և այլն
8. Մատակարարների վճարում կանխավճարներից
9. Երկու կառավարություններին վերոնշյալ փաստաթղթերի տրամադրում  
(1) Իրավասու գնումների վկայագիր՝ համաձայն Հավելված 3-ի  
(2) Պրո ֆորմա ապրանքագիր
10. Երկու կառավարությունների համար եռամսյակային կարգավիճակի վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում՝ ընդգրկելով հարցումների, պատվերների, պատվերի

կարգավիճակի, արժեքների և առաքման մասին տեղեկատվություն

11. Եռամսյակային հայտարարությունների ներկայացումը երկու Կառավարություններին՝ մանրամասնելով դրամաշնորհի և դրա հաշվարկված տոկոսների նկատմամբ հաշվեկշիռը և եռամսյակի բոլոր հատկացումները

12. Ճապոնիայի կառավարությանն ընդհանուր գնահատման հաշվետվության ներկայացում, ներառյալ՝ առաքվող բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների, թույլատրելի աղբյուր համարվող երկրի, առաքման ամսաթիվը, ապրանքների և (կամ) ծառայությունների արժեքի (ներառյալ՝ համապատասխան գանձումները) մանրամասները և դրանցից հանված և մնացորդների ընդհանուր քանակը:

**Հավելված 3**

Թույլատրելի գնումների վկայագիր

Ամսաթիվ:

Հղում N

Ներկայացվում է ըստ պահանջի՝

Հղում կատարելով ստորև կցված պրո ֆորմա ապրանքագրին, սույնով հաստատում ենք, որ գնումը համապատասխանում է Ճապոնիայի կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև (-----ամսաթվին) Նոտաների փոխանակմամբ սահմանված բոլոր դրույթներին և պայմաններին, ինչպես նաև երկու Կառավարությունների միջև (ամսաթիվ) ընթացակարգային հարցերի վերաբերյալ համաձայնեցված արձանագրությանը:

Գնումների վերաբերյալ հիմնական համապատասխան փաստերը հետևյալն են՝

1. Գնումների եղանակը

(Տեղադրեք X համապատասխան տեղում)

ա. Մրցակցային հայտեր (աճուրդ)

բ. Սահմանափակ առաջարկներ (աճուրդ)

գ. Գնումներ

դ. Ուղղակի պայմանագրի կնքում

2. Ապրանքներ և / կամ ծառայություններ

ա. Ապրանքի և (կամ) ծառայությունների անվանումը.

բ. Ծագումը

3. Ապրանքների և / կամ ծառայությունների արժեքը

ա. Ապրանքներ և / կամ ծառայություններ.

բ. Բեռնափոխադրումներ

գ. Ծովային ապահովագրություն.

դ. Գործակալի վճարները.

ե. Ընդհանուր (a + b + c + d):

4. Մատակարար

Անուն:

Հասցե:

Ազգություն.

(Երկիր, որտեղ մատակարարը հաշվառված և գրանցված է)

5. Ստացող

Անուն:

Հասցե:

(Ստորագրություն)

Գործակալը

Հավելված 4

Մնացորդային գումարով գնումներ կատարելու վկայագիր  
(Փոխհատուցման ընթացակարգ)

Ամսաթիվ:

No.:



Հիմք ընդունելով վճարման հանձնարարականը՝ ստորագրող կողմերը հաստատում են, որ այդ հանձնարարականով կատարված և ստորև նշված գնումների գործընթացն ամբողջությամբ համապատասխանում է Ճապոնիայի կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև (հայտագրի համար, ամսաթիվ, 2020) հայտագրերի փոխանակմամբ և երկու կառավարությունների միջև հաստատված Ընթացակարգային հարցերի վերաբերյալ արձանագրությամբ (արձանագրություն, ամսաթիվ 2020) սահմանված դրույթներին և պայմաններին:

Ստացող կողմի ներքոստորագրյալ ներկայացուցիչը հաստատում է, որ Ստացող կողմը Հայտագրերի փոխանակման համաձայն մինչ այժմ չի դիմել նշված գումարի փոխհատուցման համար, ոչ էլ պաշտոնական օժանդակության որևէ այլ աղբյուրի հետ ձեռք է բերել ֆինանսավորման պայմանավորվածություն:

Ստորև ներկայացված են գնման գործընթացին վերաբերող համապատասխան փաստաթղթերը:

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
Փոխանցում	Գնորդ	Մատակարար (Անվանում)	Մատակարարի քաղաքացիություն	Ապրանքներ և/կամ ծառայություն- ներ	Ծագում	Վճար ման ամսա թիվ	Վճարման գումար	Ձեռքբերման տեսակ
1.								
2.								
3.								
4.								
.								
.								

Նշված փաստաթղթերի մեկական օրինակ կցվում է կողմերից յուրաքանչյուրի համար

- ա. Կից նամակ վճարումն իրականացնող բանկի կողմից
- բ. Բեռների բեռնաթափման, ծանրոցների ստացման կամ օդային բեռնափոխադրման մասին գրություն
- գ. հաշիվ ապրանքագիր

Ստորագրություն  
(Ստացող կողմ)  
Անուն, պաշտոն

Ստորագրություն  
(գործակալ)  
Անուն, պաշտոն

Հանձնաժողովի գործունեության շրջանակները

1. Սահմանել դրամաշնորհի և դրա հաշվարկված տոկոսի արագ և արդյունավետ օգտագործման ժամանակացույց
2. Կարծիքներ փոխանակել դրամաշնորհի և դրա հաշվարկված տոկոսի հատկացումների և հավանական վերջնական օգտագործողների վերաբերյալ:
3. Հայտնաբերել դրամաշնորհի և դրա հաշվարկված տոկոսի օգտագործման համար հավանական խնդիրները և գտնել լուծումներ դրանց կարգավորման համար:
4. Կարծիքներ փոխանակել դրամաշնորհի և հաշվարկված տոկոսի օգտագործման հրապարակայնություն վերաբերյալ:
5. Քննարկել ցանկացած այլ հարց, որը կարող է բխել Հայտագրերի փոխանակումից կամ առնչվել դրա հետ:

Ճապոնական և հայկական կողմերը կունենան (Ք/Ա Քննարկումների արձանագրության)  
առանձին օրինակներ, որոնց մի հատվածը (առաջին պարբերության սյունակը և  
յուրաքանչյուր կողմի ստորագրությունը) կխոխանակվեն

Քննարկումների արձանագրությունը

(Ք/ԱՃապոնական կողմի համար))

Հղում կատարելով « E/N(ամիս) (ամսաթիվ), 2020 » -ով թվագրված Ճապոնիայի կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Ստացող) միջև Հայտագրերի փոխանակմանը, որը վերաբերում է Ճապոնիայի հետ ընդլայնվող տնտեսական համագործակցությանը՝ նպատակ ունենալով խթանել Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացմանը (այսուհետև՝ «Հայտագրերի փոխանակում»)՝ Ճապոնիայի և Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչները ցանկանում են արձանագրել հետևյալը.

(Ք/Ահայկական կողմի համար))

Հղում կատարելով « E/N(ամիս) (ամսաթիվ), 2020 » -ով թվագրված Ճապոնիայի կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Ստացող) միջև Հայտագրերի փոխանակմանը, որը վերաբերում է Ճապոնիայի հետ ընդլայնվող տնտեսական համագործակցությանը՝ նպատակ ունենալով խթանել Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացմանը (այսուհետև՝ «Հայտագրերի փոխանակում»)՝ Հայաստանի պատվիրակության և Ճապոնիայի պատվիրակության ներկայացուցիչները ցանկանում են արձանագրել հետևյալը.

1. Հայտագրերի փոխանակման 2-րդ կետի վերաբերյալ Ճապոնիայի պատվիրակության ներկայացուցիչը նշել է, որ Ճապոնիայի Կառավարությունը հասկանում է, որ

(ա) Ստացողն անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի՝ կանխելու համար «Հայտագրերի փոխանակման» Ընթացակարգային հարցերի վերաբերյալ արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման պայմանագրերի կնքման համար որպես շահագրգռող միջոց կամ հատուցում արվող ցանկացած առաջարկ, նվեր կամ վճար, դրսևորվող առանձնահատուկ մոտեցում կամ տրվող օգուտ, որն Ստացողի երկրում կարող է ընկալվել որպես կոռուպցիոն գործելակերպ:

(բ) Վերև նշված ա) ենթակետում նշված կոռուպցիոն դրսևորումներ տեղի ունենալու դեպքում, ինչը որոշվում է Ճապոնիայի կառավարության կողմից, Ստացողը կփոխհատուցի

Ճապոնիայի կառավարությանը «Հայտագրերի փոխանակման» 1-ին կետում նշված դրամաշնորհի (այսուհետ՝ Դրամաշնորհ) գումարն այն չափով, որքանով տեղի է ունեցել կոռուպցիոն դրսևորումը:

2. «Հայտագրերի փոխանակման» 5-րդ կետի 2-րդ ենթակետի առնչությամբ Ճապոնիայի պատվիրակության ներկայացուցիչը նշել է, որ Ճապոնիայի Կառավարությունը հասկանում է, որ՝

ա) անհրաժեշտ տեղեկատվությունը ներառում է տեղեկություն՝ դրամաշնորհի հետ կապված կոռուպցիոն գործելակերպի վերաբերյալ, և

բ) Ստացողը կապահովի այդպիսի տեղեկության աղբյուրների նկատմամբ արդարացի վերաբերմունք:

3. Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչը նշել է, որ Հայաստանի պատվիրակությունը Ճապոնիայի պատվիրակության ներկայացուցչի վերոնշյալ հայտարարության առնչությամբ առարկություն չունի:

Երևան, ամսաթիվ, 2020

(Ք/Ա Ճապոնական կողմի համար))

Ճապոնական կողմից ստորագրողի      Հայկական կողմից ստորագրողի  
անունն ու պաշտոնը      անունն ու պաշտոնը

(Ք/Ա Հայկական կողմի համար))

Հայկական կողմից ստորագրողի      Ճապոնական կողմից ստորագրողի  
անունն ու պաշտոնը      անունն ու պաշտոնը

Հաշվեհամար բացելու և Տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրով նախատեսված վճարումն անելու հայտի մասին ծանուցում

Երևան, ամսաթիվ, 2020

Հայաստանի Հանրապետության (Պատասխանատու նախարարության անունը) նախարարությունը իր հարգանքն է հավաստում Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանությանը և պատիվ ունի հղում կատարել Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացումը խթանելու նպատակով Ճապոնիայի հետ տնտեսական համագործակցության ընդլայնմանը վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ճապոնիայի Կառավարության միջև (հայտագրի համար, ամսաթիվ, 2020) Հայտագրերի փոխանակմանը:

Նախարարությունը պատիվ ունի տեղեկացնելու դեսպանությանը, որ Հայտագրերի փոխանակման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված հաշվեհամարը բացվել է և հայցել Ճապոնիայի կառավարությանը վերը նշված հայտագրերի փոխանակմամբ որոշված դրամաշնորհի գումարները փոխանցել՝ հիմք ընդունելով հետևյալ տեղեկատվությունը:

1. Բանկի անունը՝
2. Հասցեն՝
3. Հաշվի անվանումը՝
4. Հաշվեհամարը՝
5. Հաշվի տեսակը՝
6. Վճարման չափը՝

(Ստորագրություն)

Անուն

Պաշտոն

Հայաստանի Հանրապետության

կառավարություն/ ՀՀ պատասխանատու

նախարարության անունը